



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**»



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«22» 05 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 48

Ձեռնարկողը՝

«ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» ՍՊԸ

Ք. Երևան, Մասիսի փող. 99

Գործունեությունը՝

**Բալախովիտի բազալտի հանքավայրի ընդլայնման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկշիռություն**

«**Կոտայքի մարզ**»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



[Signature] Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 48

«22» 05 2018թ.

Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնման արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝ <<Սթռուն Լենդ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնք

Բալահովիտի հանքավայրը վարչական տարածքով գտնվում է Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում և գտնվում է Աբովյան քաղաքից 2-3կմ հարավ և Բալահովիտ գյուղից 2.5կմ դեպի արևելք:

Հանքավայրից 1.5-2.0կմ հյուսիս անցնում է Աբովյան-Մայակովսկի-Գետաշեն ասֆալտապատ ճանապարհը, որի հետ հանքավայրը կապված է 1.0-1.5կմ երկարությամբ բնահողային ճանապարհով:

Հանքավայրի շրջանի կլիման չոր, ցամաքային է, առանց եական տեղումների (400մմ): Ձմեռը ցուրտ է (-15⁰-20⁰C), ամառը չոր և շոգ (+35⁰C), տարեկան միջին գերմաստիճանը +25⁰:

ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՄ երկրաբանական վարչության ՊՏՀ-ի կողմից 1990 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 320 արձանագրությամբ, 01.01.1990 թվականի դրությամբ, հետևյալ կարգերով և քանակներով՝

A-672.6հազ.մ³, B-758.5հազ.մ³, X1-2338.2հազ.մ³: A+B+X1-3769.3հազ.մ³:

Հանքավայրի պաշարները՝ բազալտներն իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով լիովին համապատասխանում են 1102-84 ԳՈՍ-ի «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» և կարող են օգտագործվել բլոկների և շինարարական քարի արտադրության համար: Արդյունահանման արդյունքում առաջացած թափոնները օգտագործել որպես լցանյութ բետոնի ստացման համար, որն համապատասխանում է ԳՈՍՏ 8267-82 «Խիճ բնական քարերից շինարարական աշխատանքների համար» պահանջներին:

Բլոկների միջին ելքը՝ 17%:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պայմաններից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Նշված պայմաններով կառուցված բազալտներու իրենց հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարությունը - 598մ;



- Ամենամեծ լայնությունը - 264մ;
- Ամենամեծ խորությունը - 26.9մ:
- Բացահանքի օտարման տարածքը - 11.8հա:

Բացահանքում ընդգրկված հաշվեկշռային (մարվող) պաշարները կազմում են 2055650մ³, կորզվող բազալտները 1962750մ³: Մակաբացման ապարները կազմում են 219.2հազմ³:

Բացահանքը շահագործելիս առաջանում են կորուստներ, որոնք պայմանավորված են՝ կորուստներ, որոնք մնում են բացահանքի կողերի բնամասերում: Այդ կորուստները կազմում են 92 900մ³ (4.52%):

Բացահանքի շինարարական շրջանում նրա հարավ արևելյան մասով անցնող գոյություն ունեցող ավտոճանապարհից նախատեսվում է ավտոճանապարհի անցում դեպի բացահանքի բացման առաջին 1412.5մ բարձրության հորիզոն՝ 450.0մ երկարությամբ, 8մ լայնությամբ, թեքությունը՝ 72.2%: Հողային աշխատանքների ծավալը՝ 540մ³:

Հաջորդ հորիզոնները մշակվում են այդ ավտոճանապարհից աստիճանաբար փոփոխելով երկարությունը, համապատասխան թեքություններով: Իսկ 1380.0մ–1362.5մ բարձրության հորիզոնները մշակվում են բացահանքի հարավ արևելյան մասից 193մ երկարությամբ, 8մ լայնությամբ կտրող խրամի միջոցով: Կտրող խրամի թեքությունն է 90.7%:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

- Հանքաստիճանի բարձրությունը – 2.5 մ;
- Անվտանգության բերմայի լայնությունը – 1.0 մ;
- Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90°;
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ:

Մակաբացման ապարները իրենցից ներկայացնում են օգտակար հաստվածքը ծածկող, միջինը 2.2մ հզորությամբ ապարներ, որոնք իրենցից ներկայացնում են կավաավազների հետ խառը հողմնահարված, ջարդոտված բազալտի կտորներ: Ծածկող ապարերը կազմում են 258.8հազմ³: Հանքավայրը ունի նաև ներքին մակաբացման ապարներ, որոնք կազմված են ավազակավերից և խարամացված բազալտներից, որի ծավալը կազմում է 32400մ³: Ընդամենը մակաբացման ապարները կազմում են 291.2 հազմ³:

Մակաբացման ապարները Δ3-110 բուլդոզերի օգնությամբ, տեղափոխվում մինչև 100մ հեռավորությամբ հավաքվում բարձրում ավտոինքնաթափը և տեղափոխվում դեպի N1 ժամանակավոր լցակույտ և պահեստավորվում: Հնարավորություն ստեղծվելուց հետո, մակաբացման ապարները նախատեսվում է տեղափոխել բացահանքի բացված, արդյունահանված հանքաստիճանների վրա և հարթեցնել, ստեղծելով ներքին լցակույտեր:

Բուլդոզերի արտադրողականությունը 600 մ³/հերթ է :

Հանույթից առաջացած թափոնները, որոնք իրենցից ներկայացնում են բազալտի կտորներ՝ 1629080մ³, բացահանքի շահագործման տարիներին բարձրում են KpA3-256B մակնիշի ավտոինքնաթափերը և տեղափոխվում ՋՏԿ խիճ ու ավազ ստանալու համար:

Բլոկների (մեծ աղյուսների) արդյունահանումը իրականացվում է հորատասեպային եղանակով /անհրաժեշտության դեպքում կարելի է իրականացնել հորատասայթեցման եղանակով համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ/:

Բլոկների բարձումը KpA3-256B ավտոինքնաթափի մեջ, ինչպես նաև նրանց բեռնաթափումը մշակման արտադրամասում կատարվում է 16տ բեռնամբարձությամբ KC-4571 մակնիշի ավտոկռունկի միջոցով:

Հանույթային և բարձման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1.6մ³ շերեփի տարողությամբ ЭО-5122 մակնիշի էքսկավատորը, որի արտադրողականությունն է 350մ³/հերթ: 1 հատ էքսկավատորը լիովին բավարար է քարհանքի արտադրական թափոնների՝ (125.31մ³/հերթ), մակաբացման ապարների 22.4մ³/հերթ բարձման աշխատանքների համար: Բուլդոզերային աշխատանքները բացահանքում մակաբացման ապարների հեռացումն է, շինարարական քարի հավաքումը, արտադրական թափոնների կուտակումը, բլոկները դեպի արտադրական հրավայրի քարշումը և ավտոճանապարհի բարեկարգումը:



Բացահանքի արտադրական թափոնները՝ 125.31մ³/հերթ ՋՏԿ և մակաբացման ապարները՝ 22.4մ³/հերթ ծավալով լցակույտ կտեղափոխվի ավտոինքնաթափով:

Ջարդող տեսակավորող կայանքը և մակաբացման ապարների N1 լցակույտը հանքավայրի հարևանությամբ է, տեղափոխման հեռավորությունը ընդունվել է 0.5կմ:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին բուլդոզերային լցակույտառաջացում:

Հանքարդյունահանման աշխատանքները սկսելիս ծածկող ապարների շերտը, ինչպես նաև ներքին մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվում է և ավտոինքնաթափով տեղափոխվում բացահանքի հարավ արևելյան մասը՝ բացահանքի սահմաններից դուրս՝ արտաքին N1 ժամանակավոր լցակույտ:

Շահագործման 20-րդ տարվանից սկսած N1 լցակույտում եղած մակաբացման ապարները աստիճանաբար կտեղափոխվեն և կլցվեն արդեն արդյունահանված տարածքի 1390.0մ-1362.5մ բարձրության հորիզոնների վրա միջինը՝ 3.0մ բարձրությամբ և կհարթեցվեն, կստեղծվի ներքին լցակույտ:

Շահագործման ավարտից հետո իրականացվում է խախտված հողերի վերականգնում, որի ժամանակ լցակույտում մնացած մակաբացման ապարների՝ 9900մ³ ծավալը, կտեղափոխվի 1365.0մ և 1362.5մ բարձրության հորիզոնների վրա և կհարթեցվի:

Մակաբացման ապարների հաշվարկային ընդհանուր ծավալը կազմում է 291200մ³:

Լցակույտը կազմված է երկու յարուսներից, միջինը ունի 14մ բարձրություն, որի թեքության 350-ի դեպքում՝ մակերեսը վերին մասում կազմում է՝ 11520մ², իսկ ներքևում՝ 25200մ²: Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորը կարելի է օգտագործել լցակույտառաջացման ժամանակ:

Լցակույտառաջացումը ըստ տարիների և դրանց վերջնական դիրքերը բերված են նախագծի գծագրական մասում:

Հանույթից առաջացած թափոնները, որոնք իրենցից ներկայացնում են բազալտի կտորներ՝ 333 670մ³ ծավալով բացահանքի շահագործման տարիներին բարձվում են KpA3-256B մակնիշի ավտոինքնաթափերը և տեղափոխվում ՋՏԿ խիճ ու ավազ ստանալու համար:

Լեռնակապիտալ աշխատանքներն են՝

ա. Բացահանքի շահագործման շինարարական շրջանում բացահանքի հարավային մասով անցնող գոյություն ունեցող ավտոճանապարհից նախատեսվում է ավտոճանապարհի անցում դեպի բացահանքի բացման առաջին 1412.5մ բարձրության հորիզոն՝ 450.0մ երկարությամբ, 8մ լայնությամբ, թեքությունը՝ 72.2%: Հողային աշխատանքների ծավալը՝ 540մ³:

բ. Բացված պաշարներով ապահովման համար մակաբացման ապարների հեռացում-25400մ³:

գ. Ուղեկցող հանույթ՝ 6540մ³:

դ. Արդյունաբերական հրապարակի ստեղծում- 280մ³

Թեք խրամների անցկացումը՝ մակաբացման ապարների հեռացումը կատարվում է Ժ-110 բուլդոզերի օգնությամբ:

Բազալտի շերտերի հանույթը իրականացվում է հորատասեպային եղանակով:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է հորատման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է KO-002 մակնիշի ջրցան-վացող մեքենայով: Նույն մեքենայով կարելի է ջուրը մղել լողանալու նպատակով տեղադրված ջրցողարանի բաքը: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ՍԻ-ԵԼԵ -1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում:

Ամնիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո:



Արտաքին N1 լցակույտում մնացած մակաբացման ապարների 9900 մ ծավալով շերտը կբարձվի ավտոինքնաթափը և կտեղափոխվի բացահանք կլցվի միջինը 3մ բարձրությամբ և կհարթեցվի: Հարթեցվող մակերեսներն են՝ բացահանքի հատակը՝ 52600մ² մակերեսով, 1362.5մ և 1365.0մ հորիզոնները՝ 3800մ², ավտոճանապարհները՝ 2600մ², և արտադրական հրապարակը՝ 280մ²: Ընդամենը կկազմեն՝ 59280մ²: Հարթեցումը կատարվում է Ա3-110 բուլդոզերի օգնությամբ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվող գումարը կազմում է 2683.7հազ. դրամ:

Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա:

- Փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում:

- Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

- Մեքենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսք տեղի չունենա:

Առկա է <<Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության >> դրական փորձաքննությունը:

Ջրային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ, ներառյալ տեխնիկական անվտանգության փորձաքննական եզրակացությունը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետմախազային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և



հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինադրի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սթուն Լենդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդլայնման արդյունահանման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան